Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-1214³-11.12.2025-ՊԱ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ոստիկանությունում ծառայության մասին» 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-401-Ն օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասում «այդ թվում՝ համազգեստ, որի նկարագիրը և կրելու ժամկետները սահմանում է Կառավարությունը» բառերը փոխարինել «որի որակի և դիզայնի միասնական չափանիշները, ինչպես նաև նկարագիրը և կրելու ժամկետները սահմանում է Լիազոր մարմնի ղեկավարը» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ (Կ-1214-11.12.2025-ՊԱ-011/1) ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն երն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**ՀՀ կառավարություն**	«Փրկարար ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագիր, նոր լրացվող 3-րդ հոդված, նախագծի 3-րդ հոդված (նոր խմբագրությամբ՝ 4-րդ հոդված)	Հաշվի առնելով, որ ՀՀ ներքին գործերի նախարարության կառուցվածքում նոր ձևավորվող Օպերատիվ կառավարման գրասենյակը իրականացնելու է նաև «Փրկարար ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով նախատեսված ճգնաժամային իրավիճակների կառավարման գործառույթներ, ուստի նախատեսվում է Օպերատիվ կառավարման գրասենյակում սահմանել փրկարար ծառայության պաշտոններ: Գործող օրենքի համաձայն՝ Ներքին գործերի նախարարը լիազորված է՝ նշանակելու Լիազոր մարմնի ուսումնական հաստատության փրկարար ծառայության	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	**Ընդունվել է:**

			պաշտոններում, բայց ոչ՝ նախարարության կառուցվածքում ներառված ստորաբաժանման փրկարար ծառայության պաշտոններում: Ըստ այդմ, առաջարկում ենք «Փրկարար ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ հոդվածով. **«Հոդված 3.** Օրենքի 31-րդ հոդվածի 4.1-ին մասում «Լիազոր մարմնի ուսումնական» բառերից առաջ լրացնել «Լիազոր մարմնում փրկարար ծառայության պաշտոններում, ինչպես նաև» բառերը:»: Միաժամանակ, հաշվի առնելով վերոգրյալը, առաջարկում ենք օրենքի նախագծի վերնագրում «ԼՐԱՑՈՒՄ» բառը փոխարինել «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառով և վերանայել օրենքի նախագծի 3-րդ հոդվածի համարակալումը:		
2.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ	«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ նախարարը **ինքնուրույն** ղեկավարում է նախարարությանը վերապահված գործունեության ոլորտը, ինքնուրույն մշակում և իրականացնում է	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	**Ընդունվել է:**

			Կառավարության՝ նախարարությանը վերապահված գործունեության ոլորտի քաղաքականությունը, իրականացնում է նախարարությանը ենթակա մարմնի, ինչպես նաև նախարարությանը ենթակա կազմակերպության կառավարումը և վերահսկողություն է իրականացնում նրանց նկատմամբ, այդ թվում՝ վերանայում է նախարարությանը ենթակա մարմնի որոշումները: Բացի այդ, ՀՀ կառավարության 2024թ. նոյեմբերի 15-ի «Ոստիկանության բարեփոխումների իրականացման ռազմավարությունը և դրանից բխող 2024-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 1803-Լ որոշմամբ հաստատված 2-րդ հավելվածի 1-ին ուղղության 5-րդ՝ «Ոստիկանության արտաքին նկարագրի բարելավում, միասնականացում» գործողության շրջանակներում, որպես արդյունք, նախատեսվում է ընդունել ոստիկանական համազգեստների որակի և դիզայնի միասնական չափանիշներ սահմանող՝ ՆԳ նախարարի հրաման: Միաժամանակ, ներկայումս ոստիկանության ծառայողի համազգեստի նկարագիրն ու կրելու ժամկետները սահմանելու		

			լիազորությունը վերապահված է ՀՀ կառավարությանը, ինչը պայմանավորված է եղել ոստիկանության՝ մինչև Ներքին գործերի նախարարության ձևավորումը ունեցած կարգավիճակով: Ըստ այդմ, առաջարկում ենք առաջին ընթերցմամբ ընդունված նախագծերի փաթեթում ներառել նաև «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ, որով առաջարկում ենք գործող օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասում «այդ թվում՝ համազգեստ, որի նկարագիրը և կրելու ժամկետները սահմանում է Կառավարությունը» բառերը փոխարինել «որի որակի և դիզայնի միասնական չափանիշները, ինչպես նաև նկարագիրը և կրելու ժամկետները սահմանում է Լիազոր մարմնի ղեկավարը» բառերով:		